ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 6-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի առաջին մասի 19-րդ, և 20-րդ
կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, համ ձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի կողմից 2019 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 28-ի թիվ 68-Ա որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության մշակույթի տների դահլիճների վարձակալական վճարի չափ սահմանվում է՝ մանկական միջոցառումների համար՝ 10000/տաս հազար/ դրամ, բարեգործական միջոցառումների համար 0/զրո/ դրամ, այլ միջոցառումների համար 20000/քսան հազար/ դրամ, թատերական խումբ՝ 3000/երեք հազար/ դրամ:
2. Տաթև համայնքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար վճարի չափ սահմանվում է հինգ հազար դրամ, իսկ բնակավայրերի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:
3. Համայնքի սեփականություն հանդիսացող հացահատիկային կոմբայներով հունձ իրականացնելու համար յուրաքանչյուր 1 հեկտարի համար սահմանել վճար 8000/ութ հազար/ ՀՀ դրամ(դիզելային վառելիքը ներառյալ լինելու դեպքում/20 լիտր/ ավելացնել վճարը՝ ձեռք բերված արժեքով)
4. Համայնքի սեփականություն հանդիսացող բազմաֆունկցիոնալ էքսկավատորով աշխատանքներ իրականացնելուց յուրաքանչյուր 1 մոտոժամի համար սահմանել վճար 10000/տաս հազար/ ՀՀ դրամ(դիզելային վառելիքը ներառյալ): Այլ կազմակերպությունների կողմից վարձակալելու ժամանակ 15000/տասնհինգ հազար/ ՀՀ դրամ(դիզելային վառելիքը ներառյալ):

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի Մ. Գերասիմյան